№ 51 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 7 — 1901 — ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 7 № 51

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սխալ որոշում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Անբերրիութիւնից վնասված գիւղացիների օգտին. Շատ բնորոշ է. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ Մանրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՍԽԱԼ ՈՐՈՇՈՒՄ

Թիֆլիսի քաղաքային դումայի երկուշաբթի, մարտի 5-ին, վերաքննելով ձայնաւորներ ընտրելու եղանակները, որոշեց կրկին վերադառնալ ընտրութեան հին ձեւին, այն է կատարել նրան մի ընտրողական ժողովում:

Այդ որոշումը մի սխալ էր և անհետեւողական մի քայլ: Այդ որոշումը հակասում էր դումայի նախկին որոշման նոյն հարցի մասին, մինչդեռ ոչ մի նոր շօշափելի առարկութիւն չէր հանդէս եկել փոփոխութիւն կատարելու համար:

Երեք ամիս սրանից առաջ, այն է անցեալ տարվայ նոյեմբերի 27-ին, դումայի, մանրամասն քննութեան ենթարկելով ընտրութիւններ կատարելու հարցը և ուշադրութեան առնելով զանազան տեղական հանգամանքներ, ձայների ջախջախիչ առաւելութեամբ որոշեց ձայնաւորների ընտրութիւնը կատարել երեք ընտրողական ժողովներում: Այն ժամանակից մինչև այժմ իրերի և տեղական հանգամանքների ընթացքը ոչնչով չէ փոխվել և այժմ նոր փաստեր չեն երևան եկել համոզելու, թէ աւելի նպատակայարմար է կատարել ընտրութիւնները մի ժողովում: Մինչդեռ դումայի իր վերջին նիստում բեկանեց իր նախկին որոշումը և կանգ առաւ մի ընտրողական ժողովի վրա:

Դումայի նոյեմբերի 27-ին կայացրած որոշումը ներկայացված էր Թիֆլիսի նահանգական վարչութեան: Նահանգական ատեանը, ժողովելով նոր տեղեկութիւններ, նկատել էր, որ ընտրողների թիւը տարբերվում է այն թիւից, որ յայտնի է եղել դումային՝ նրա որոշումը կայացնելու ժամանակ: Ուստի իր կողմից, նոր հաշիւներ անելով, եկել է այն եզրակացութեան, որ պէտք է դասաւորել ընտրողներին փոքրը ինչ տարբեր այն ձևից, որ ընդունել էր դումայի նոյեմբերի 27-ի իր որոշումով: Թիֆլիսի նահանգապետը ատեանի այդ եզրակացութիւնները յայտնել էր դումային:

Դումայի հաւանութիւն չը տուեց այդ նոր դասաւորութեան առաջարկին և, մերժելով նրան, մի և նոյն ժամանակ մերժեց և երեք ընտրողական ժողովներում ընտրութիւն կատարելը: Դումայի մոռացաւ իր բոլոր այն խորհրդածութիւնները և առարկութիւնները, որոնք թելադրել էին նրան նոյեմբերին որոշում կայացնել միաժողով ընտրութեան դէմ և փորձել ընտրութեան նոր ձև:

Նոյեմբերի 27-ի որոշումը նպաստեց մի քանի թիւրիմացութիւններ ցրելու և ընտրութեան անաչառութեան վերաբերեալ կասկածները փարատելու: Այժմ նորից նիւթ է տրվում թիւրիմացութիւնների համար, որոնք որքան էլ անհիմն լինեն, այնուամենայնիւ, ահա մի քանի տարի է, աջող հող են գտնում մարդկանց մտքերը յուզելու համար: Դումայի վերջին որոշումը անհետեւողական էր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Վերադառնում ենք պ. Խատիսեանի յօդուածին, որի մասին խօսեցինք անցեալ անգամ: Այժմ կը պատասխանենք պարոնի տուած մի հարցին, որ մի տեսակէտով ունի մեծ հետաքրքրութիւն:

Անվիճելի փաստ է—ասում է յօդուածագիրը—որ հայ բուրժուազիան բոլորովին չէ կարդում հայերէն, իսկ ինտելիգենցիան—քիչ է կարդում: Ի՞նչից է սա, արդեօք նրանից, որ այդ դասակարգերը բոլորովին չեն հետաքրքրվում հայերէն գրքերով եւ հրատարակութիւններով, թէ նրանից, որ կարդալու բան չը կայ:

Այս հարցը պարոնը տալիս է «Մշակին» եւ «Մուրճին», որովհետեւ այս երկուսի կարծիքը նրան հետաքրքրում է: Բայց չը սպասելով, թէ ինչ կասեն նրանք, որոնց ուղղված է հարցը, պ. Խատիսեան շտապում է ինքը մասամբ պատասխանել նրան:

Ունենք ծանրակշիռ հիմքեր կարծելու, թէ բացի անտարբերութիւնից, հետաքրքրական նիւթի բացակայութիւնն էլ վերջին դերը չէ խաղում այն բանի մէջ, որ մեր բուրժուազիան եւ ինտելիգենցիան թոյլ սէր ունեն դէպի ընթերցանութիւնը: Բաֆֆիին եւ Արծրունուն կարդում էին նրանք, որոնք այժմ ոչինչ չեն կարդում:

Հարցը այնքան հեշտ չէ լուծվում, ինչպէս կարծում է պ. յօդուածագիրը: Դա հայ բուրժուազիայի եւ հայ ինտելիգենցիայի արատների, անբարոյականութեան հարցն է, որի մասին մենք, դժբաղդաբար, չենք կարող մանրամասն խօսել: Եթէ այդպիսի հարցեր տուողները բարեհաճէին ներկայ ժամանակներից յետ գնալ, որոնել երեւոյթը մեր անցեալում, նրանք կը տեսնէին, որ հայ բուրժուազիան մի եւ նոյն է եղել ամեն ժամանակ: Կը տեսնէին, օրինակ, որ Լեհաստանի ամբողջ հայութիւնը, նախ քան կաթոլիկութեան ծովի մէջ անյայտանալը, ստորագրել էր իր մահվան դատավճիռը նրանով, որ մոռացել էր իր մայրենի լեզուն եւ եւ նոյն իսկ եկեղեցում էլ գործ էր ածում Ղրիմից տարած թաթարերէն լեզուն: Կը տեսնէին, որ հայը Հնդկաստանում անդլիերէն լեզուն է ընտանիքի լեզու դարձնում, կովկասեան լեռներում՝ չէրքէզերէն լեզուն, Թիւրքիայում՝ թիւրքերէնը եւ նոյն իսկ քըրդերէնը... Եւ ամեն տեղ, նկատեցէք, գլխաւորապէս բուրժուազիան է, որ այդպէս է անում: Հայ լեզուն հայի համար, գլխաւորապէս հարուստ, վաճառական եւ պաշտօնեայ հայի համար, միշտ եղել է արհամարհանքի առարկայ. մեր պատմութեան փիլիսոփայութիւնը ամենից առաջ եւ ամենից շատ այն է, որ հայը օտարի համար ամեն ինչ է, իսկ իր համար—ոչնչութիւն, պատիժ, ամօթ: Կարծել թէ այդ ճակատագիրը կարող է վերանալ կախարդական գաւազանի մի հարուածով—աննկարելի միամտութիւն կը լինէր: Հայերէն գիրքը բուրժուազիայի եւ ինտելիգենցիայի տան մէջ միշտ խորթ ու անհասկանալի կը մնայ, քանի որ այնտեղից վռնդված կը լինի հայերէն լեզուն: Նախ պէտք է իմանալ հայերէն, որպէս զի կարելի լինի հայերէն գիրք կարդալ: Սա նոյնպիսի տարրական ճշմարտութիւն է, ինչպէս 2×2=4: Հայերէն լեզուն պահպանել է հասարակ ժողովուրդը—սա ոչ թէ օրվայ իրողութիւն է, այլ դարերի, երկար դարերի իրողութիւն: Նայեցէք ձեր շուրջը, եւ ամեն ինչ, ամեն տեսակ փաստ միայն այդ ցոյց կը տայ ձեզ: Ամերիկայի եւ Եգիպտոսի գաղթականութիւնները մեծ մասամբ մեր աչքի առջեւ կազմվեցին. բայց այսօր այդ տեղերում հայերէն իմացողներին պէտք է մատներով համրել: Մենք, ի հարկէ, չենք կարող ուրանալ, որ բարձր կուլտուրան, աւելի զարգացած, նուրբ լեզուն ոչնչացնող ազդեցութիւն ունեն. բայց մի եւ նոյն ժամանակ նկատի ունենք եւ այն, որ հայը թրքախօս, քրդախօս, չէրքէզախօս է, եւ դա ոչ թէ այն պատճառով, որ թիւրքը, քուրդը, չէրքէզը հայից բարձր են իրանց կուլտուրայով, իրանց գրականութեամբ: Եթէ աւելի զարգացած, հարուստ լեզուն պիտի անպատճառ ոչնչացնէ աւելի աղքատ լեզուները, այն ժամանակ մենք նոյն երեւոյթը պիտի տեսնէինք մեր հարեւան վրացիների մէջ: Ինչցնչ է, հարցնում ենք, որ վրացի ամենաբարձրը ազնւականը, կալուածատէրը, բուրժուան ոչ միայն շատ լաւ գիտեն իրանց մայրենի լեզուն, այլ եւ մի առանձին պարծանք են համարում այդ լեզուով խօսելը, իսկ մի որ եւ է հայ վաճառական, որ երէկ, անցեալ օրն է իր տրեխները գիւղում թողել ու հարստացել, նեբելի եւ աննկարելի միջոցներով, իսկոյն իր պարտքն է համարում հրաժարվել իր մայրենի լեզուից եւ, ինչպէս ասում են, «կոտրատել» զանազան օտար լեզուներ: Բագումում դուք կը տեսնէք միլիոնատէրեր, որոնց հայրերը հասարակ արհեստաւորներ էին տարիներ առաջ մեր գաւառներում. այսօր այդ մարդկանց առաջին սերունդն է ապրում, բայց չը գիտէ հայերէն լեզուով մի բառ անգամ: Թիֆլիսում շատ կան այնպիսի բուրժուաներ, որոնց հայութեան միակ նշանն այն է, որ, երբ նրանք կը մեռնեն, հայ տէրտէրը եւ ոչ թէ մի ուրիշը կը տանեն նրանց թաղելու: Այդպիսի մարդիկ ինչպէս կարող են հայերէն գիրք կարդալ...

Խոստովանում ենք, մեր գրականութիւնը, մեր մամուլը ընդհանուր առմամբ դեռ շատ թոյլ են զարգացած: Բայց ասել թէ հայ բուրժուայի հասկացողութիւններին էլ չէ կարողանում բաւարարութիւն տալ հայ գրականութիւնը,—դա առնուազը մեծ վիրաւորանք է: Ո՞րն է բուրժուազիայի այն մտաւոր կերակուրը, որ նա վերցնում է օտար գրականութիւններից. եւ առհասարակ, ունի՞ նա որ եւ է մտաւոր կերակուր: Հէնց վերցնենք Թիֆլիսի լրագիրները: Ասացէք, խնդրում ենք, ինչ հրաչքներ են կարողանում կատարել Թիֆլիսի ռուս լրագիրները, որ հայերէն լրագիրը չէ կարողանում կատարել: Դուք չէք ցոյց տայ այդպիսի բան: Բայց եւ այդպէս, կը տեսնէք, որ հայ բուրժուան չէ կարդում հայերէն լրագիրը: Ծածկած բազարի վաճառականը, հէնց որ մի մեռել է ունենում, վազում է դէպի ռուս լրագիրների խմբագրութիւնները, որ այնտեղ յայտարարութիւններ տպել տայ, իսկ հայ լրագրին մնում է իր ամբողջ յոյսը—այո, ամբողջ յոյսը, սա փաստերի վրա հիմնված բան է,—դնել գաւառացի արհեստաւոր, կիսագրագէտ բաժանորդների վրա: Ահա ինչ է ասում Զրադաշտը, պ. Խատիսեան. այսպէս ասում է անողորմ իրականութիւնը: Եւ իզուր դուք բերում էք Բաֆֆիի եւ Արծրունու անունները. Արծրունին էլ, Բաֆֆին էլ չարունակ հարուածել են հայ բուրժուազիայի եւ մանաւանդ ինտելիգենցիայի անբարոյականութիւնները, որոնցից գլխաւորը մայրենի լեզուն արհամարելն է: Դուցէ եղել են երկու երեք բուրժուաներ, որոնք կարդացել են Արծրունուն եւ Բաֆֆիին, իսկ այսօր ոչինչ չեն կարդում, ասելով թէ կարդալու բան չը կայ: Բայց այդպիսիները, եթէ այդքան զարգացած գրական ճաշակ ունեն, պիտի հասկանան, թէ Բաֆֆիները եւ Արծրունիները ամեն ժամանակ չեն լինում, թէ չէ կարելի պահանջել, որ գրականութիւնը միայն առաջնակարգ գրուածքներից բաղկացած լինի. հապ նոյն բուրժուան, իմանալով որ ռուսաց գրականութեան մէջ կան Տոլստոյ, Կորոլենկո, Գորկի, մի եւ նոյն ժամանակ կարդում է Գէյնցէի խայտառակ վէպերը. այլապէս ինչու՞ են տպվում այդ վէպերը եւ տպողներից մէկը հէնց նոյն իսկ «Кавказскій Вѣстникъ»-ն է: Ժամանակ է, վերջապէս, դէն չպրտել այն առասպելը, թէ հայ ինտելիգենցիան կամ բուրժուազիան ոչինչ չեն կարդում հայերէն, որովհետեւ ոչինչ չը կայ կարդալու: Դա անբարեխղճութիւնը փայլուն բառերով ծածկելու մի ողորմելի միջոց է, ուրիշ ոչինչ: Ահա կայ հայերէն լրագիր. նրա մէջ պատկերացած է լինում, որքան այդ հնարաւոր է, հայոց կեանքը: Լրագիրը ամենից առաջ իրականութիւնը պատկերացնելու կոչումն ունի լուրերի, թղթակցութիւնների, յօդուածների միջոցով: Կարդում է նրան հայ ինտելիգենտը, հայ բուրժուան, կարդում է—չենք ասում ճաշակ զարգացնելու, բարձր բաներ սովորելու համար, այլ գոնէ իր ազգի իրականութիւնը մօտիկից ճանաչելու, նրա մասին տեղեկութիւններ ունենալու համար:—Ոչ. չէ կարդում: Եւ վերջ ի վերջոյ գալիս, կանգ ենք առնում մի եւ նոյն փաստի առաջ. եթէ երէկվայ կիսագրագէտ «սովդաքարը» այսօր միլիոնատէր է դարձել եւ իր այդ նոր դերքի համեմատ պալատներ է շինում եւ իր լեզուն արտաքսում այդ պալատներից, դա դեռ չէ նշանակում թէ «սովդաքարութիւնից» միլիոնատիրութեան հասնելիս՝ այդ մարդու մտաւոր հասկացողութիւններն էլ այնքան բարձրացան, որ հայոց մամուլն ու գրականութիւնը այլ եւս չեն կարող հասնել նրա «մեծ» խելքին: Եթէ ինտելիգենցիան չէ կարդում հայերէն, դա ուղղակի անբարեխղճութեան հետեւանք է, որովհետեւ նա ունի կարդալու նիւթ: Այժմ հասկանալի է:

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախալքալաքի գաւառում անբերրիութիւնից վնասված գիւղացիների օգտին.

Բագուից՝ Համբարձում Տէր-Կարապետեանից 82 բուբլի 60 կոպէկ: Այդ գումարը հաւաքված է Պարսկաստանի Բարֆրուշ քաղաքում: Նուիրատուներն են՝ Հ. Տէր-Կարապետեան 20 ղրան, Ոմն 20 ղրան, Հ. Աֆթանդիլեանց 10 ղր., Յովհ. Նաթաժեան 20, Եղբ. Բաղդեանց 20, Մ. Տէր-Միքայէլեանց 10, Զ. Ներսէսեան 10, Մ. Տէր-Յովհաննիսեան 10, Գ. Աբրահամեանց 10, Ոմն 5, Յ. Նուսնուսեան 5, Մ. Յակովբեան 10, Մ. Գրիգորեանց 25, Ոմն 10, Գ. Յարութիւնեան 5, Հայկազեան 10, Աղամիրզեան 5, մանր հաւաքած 14 ղրան: Աստրաբատում՝ Ոմն 25, Թ. Ս. Ան. 25, Մուժամբար 20, Դաւրէժ, 25, Կարճեւանցի 15, Վաչագայ 20, Խաչատուր 10, Ոմն 10, Հէրման 26, Ահարոն 10, Էյվազեանց Կ. 10, Էյվազեանց Մ. 5, Ա. Կարապետեան 20, Տիգրան 5, Բաղդեանց 10: Գումարն է 455 ղրան, որ վերածելով ռուսաց դրամի՝ գոյացել է 80 ր. 99 կոպ. բացի դրանից ստացված է Մինաս Թումանեանից 2 բուբլի, ընդամենը 82 ր. 99 կ., որից հանված է ճանապարհածախս 39 կոպէկ:

Ընդամենը 82 բուբլի 60 կոպ.: Մինչեւ այժմ ստացել ենք 567 բուբլի 60 կոպ.:

ՇԱՏ ԲՆՈՐՈՇ Է

«Մշակի» № 36-ի մէջ Ալէքսանդրոպոլից հաղորդված էր, թէ այնտեղի հարուստ քաղաքացի Յ. Դրամբեան մեղադրվում է վաշխառութեան մէջ: Այդ լուրը «Մշակի» № 41-ի մէջ հերքեց Յովհաննէս Դրամբեանց Ալէքսանդրոպոլից գրած իր նամակով, ասելով թէ լրատուի յիշատակած գործը վաշխառութեան չէ վերաբերվում, այլ մի հասարակ քաղաքացիական պահանջ է, որ ինքը, Յովհաննէս Դրամբեան, սկսել է Երեւանի նահանգական դատարանում մի պարոնի դէմ:

Լաւ նկատեցէք այս հանգամանքները եւ տեսէք, թէ ինչ է հետեւում այդ բոլորին: Անցեալ օրը ստանում ենք Պետերբուրգից մի նամակ: Դա այնքան բնորոշ, այնքան շատ բան ասող մի դոկումենտ է, որ մենք չենք կարող զրկել մեզ՝ նրան ամբողջովին առանց որ եւ է փոփոխութեան տպագրելու բաւականութիւնից: Ահա այդ նամակը.

Милостивый Государь! Изъ № 5622 «Новаго Обозрѣнія» я узналъ, какъ Ваша газета «Мшакъ» низко оклеветала меня передъ обществомъ, называя ростовщикомъ и распространяя ложный слухъ, будто мое «дѣло» разбирается въ Александрополѣ.

Не считая даже нужнымъ оправдываться, хотя у меня къ тому масса фактическихъ данныхъ, я приглашаю Васъ, Милостивый Государь, немедленно опровергнуть клевету, возводимую на меня Вашей газетой и предупреждаю, чтобъ Вы впредь были благоразумнѣе и не шутили такъ легкомысленно, ибо въ лучшемъ случаѣ Вы рискуете своей физіономіей и ребрами.

Студентъ Горнаго Института Багратъ Баг-

дасаровичъ Драмповъ. 27 февраля 1901 г.

С.-Петербургъ.

P. S. Не забывайте, Мил. Государь, что годъ тому назадъ Ваша газета ставила меня въ образецъ другимъ молодымъ людямъ, когда я принялъ въ число своихъ стипендіатовъ 30 учениковъ александрополь. городскихъ училищъ, лишенныхъ возможности вносить плату за право ученія.

Тотъ же.

Առ այժմ բաւականանում ենք այս վերին աստիճանի ընորոշ փաստը հասարակութեան առջեւ դնելով։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Մարտի 2-ին

Գրել էի, թէ անբերրիութիւնից վնասված գիւղացիներին օգնող կոմիտէի առաջին նիստի որոշմամբ յատուկ մարդիկ գնացին ամենից շատ վնասված ինը գիւղերը, որ քաղցած որբերի, այրիների, աշխատելու անընդունակ ծերերի եւ հաշմանդամների ցուցակ կազմվի, որ հաւաքած տեղեկութիւնների համաձայն՝ բաժանվի գլխաւոր կոմիտէի փոխարինաբար ուղարկած գումարով ձեռք բերած ալիւրը։ Կայացան եւ երկրորդ ու երրորդ նիստերը։ Երկրորդ նիստում քննվեցին գիւղերից բերած ցուցակները, մանրամասն տեղեկութիւններով։ Երեւաց, որ ինը գիւղերից ամենից շատ կարօտ են եւ նեղութիւն են քաշում Վաչիանը, Օրճան, Դիլիսկան, Կօրխը եւ Գիւմիւրդան։ Զանդուրա գիւղը, թէեւ ամենից շատ է վնասվել, բայց քաղցող ընտանիքներ համեմատաբար քիչ ունի, որովհետեւ քաղաքին մօտ է, եւ շատերը աշխատում են քաղաքում։ Աւելի նուազ կարօտութեան մէջ են Մաճադիան եւ, մանաւանդ, Կիլդան ու Մուրճախէթը։ Այդ նիստում վիճաբանութիւն ծագեց այն հարցի մասին, թէ պէտք է արդեօք ալիւր տալ թէկուզ մի զոյգ եղ կամ մի կով ունեցող գիւղացուն, թէ ոչ։ Շատերը պնդում էին, թէ պէտք է դրանց էլ օգնել, որ ստիպված չը լինեն իրանց վերջին նեցուկ—եղը ծախելու, վերջնականապէս քայքայվելու եւ երկար ժամանակով ծանրանալու հասարակութեան վրա։ Բայց միջոց չունենալու պատճառով՝ կոմիտէը, ձայների մեծամասնութեամբ, որոշեց առ այժմ ալիւր տալ միայն այն գիւղացիներին, որոնք այլ եւս ոչինչ չունեն եւ քաղցում են։ Ինչպէս յայտնի է, այդ գիւղերում ընտանի կենդանիների մեծ մասը ծախվել է։ Օրինակ՝ Վաչիան գիւղում, որ մի երեք տարի առաջ մեր գաւառի ամենահարուստ գիւղն էր համարվում իր առատ հացով, ընտիր նժոյգներով եւ այլն, հիմա 206 տանից մօտ 150 տուն ոչ մի հատ ընտանի կենդանի չունի այլ եւս, եւ այդ գիւղը հիմա ամենաաղքատ գիւղերից մէկն է դառել։ Ի հարկէ քաղցածութիւնը շուտով կը ստիպէ մնացած կենդանիներն էլ ծախելու...

Այդ նիստի շարունակութիւնը կազմող երրորդ նիստում վերջնականապէս որոշվեց կարօտների թիւը հետեւեալ կերպով. Վաչիանից—56 տուն, 328 հոգի, Օրճայից—55 տ., 266 հ., Դելիսկայից—31 տ. 231 հ., Կօրխից—49 տ., 187 հ., Գիւմիւրդայից—25 տ., 136 հ., Զանդուրայից—17 տ., 92 հ., Մաճադիայից—14 տ., 67 հ., Կիլդայից—9 տ., 50 հ. եւ Մուրճախէթից—3 տ., 12 հ., ընդամենը—259 տ. եւ 1369 հ.։ Նոյնպէս որոշվեց, իբրեւ մի ամսվայ ապահովութիւն, մարդագլուխ ամեն մի հոգուն տալ 30 ֆունտ ալիւր կամ բոլոր 1369 հոգուն մօտ 1027 պուդ, որից 650 պուդը այստեղ առնվեց. բացի դրանից մի վագօն ալիւր էլ հեռագրով պատուիրվեց։ Կարօտների ցուցակները ուղարկվում են գիւղական տանուտէրներին, որ նրանց ուղարկեն քաղաք՝ իրանց բաժին ալիւրը ստանալու։

Ինչպէս ասացինք, ամեն մի հոգուն մի ամսվայ համար կը տրվի 30 ֆունտ ալիւր, «ուզում է ապրի, ուզում է մեռնի»։ Բայց, ի հարկէ, դրանով բան չի լինի, կրկին պէտք է օգնութեան հասնել, լուրջ օգնութեան։ Շուտով այդ ալիւրը կը վերջանայ, միւս գիւղացիներն էլ իրանց վերջին եղն ու կովը կը ծախեն, եւ ամենքը կրկին կը ցանկան ուտել, որ ապրեն։ Այդպիսով կարօտութիւնը կընդհանրանայ եւ օգնութեան աւելի մեծ կարիք կը լինի։ Շուտով դաշտային աշխատութիւնները, վար ու ցանքը կըսկսվեն. գիւղացին աւելի խիստ կարիք կը զգայ ուտելու, որ աշխատէ. նրան սերմացու պէտք կը լինի, որ սերմէ։ Ուրեմն օգնենք, ամեն կերպ օգնենք, ով ինչով կարող է։

Տեսէք, մեր գիւղացու վրա սպառնական կերպով նայում է սովը՝ իր բոլոր արհաւիրքներով, տիֆը եւ այլ հիւանդութիւնները։ Թոյլ չը տանք, որ գետի մէջ խեղդվելուց ազատված կնոջը հիմա «ցամաք գետը» տանէ, բոլոր գետերից ամենաասոսկալին. թոյլ չը տանք, որ վաչիանցիներն ու չանդուրացիները շարունակեն տները քանդել, որ գերանները ծախեն, թոյլ չը տանք, որ մեր գիւղացին ծախէ իր «աչքի լոյս», իր «եղբայր—եզը», իր այդ վերջին յոյսը, ապաւէնը... էլ նա ինչ վարձ ցանքս կանէ... թոյլ չը տանք, որ մեր գիւղացիները ցրվեն չրջակայ գաւառները՝ մարաբայութիւն անելու։ Գիտէք ինչ կը նշանակէ մարաբա։ Հողազուրկ, իրաւազուրկ բատրակ, օտարի հողը մշակող ճորտ-ընտանիք, շատ անգամ իր հողից զրկված, պանդուխտ եւ անճար գիւղացի։ Ահա ինչ կը նշանակէ մարաբա։ Ուրեմն թոյլ չը տանք, որ մեր գիւղացին իր արիւն-քրտինքով ողողած հողից պոկ գայ, կորվի։ Նա լիովին արժանի է մեր օգնութեան. արժանի է, իբրեւ կարօտ, արժանի է եւ այն պատճառով, որ անցեալ տարի նա երկրաշարժից վնասված հարիւրաւոր ընտանիքներ պատսպարեց իր օջաղի չուրջը եւ երբ կոմիտէը նրան վարձատրութիւն առաջարկեց, նա հրաժարվեց։ Բացի դրանից՝ անցեալ տարի, երբ մեր գաւառի մի քանի ուրիշ գիւղերում գտնվեցին ցածահոգի, ստրուկ անհատներ, որոնք՝ խաղալիք դարձած վաչխառուների ձեռքերին՝ ծառայում էին նրանց ստոր նպատակներին, այդ ժամանակ մեր ներկայ կարօտ գիւղերից եւ ոչ մէկը իրան չարատաւորեց։ Այդ է պատճառը, որ մեր գիւղացին, փորձված անցեալի դառն խրատներից, նոյն իսկ ներկայ նեղ վիճակում չի դիմում անարդ վաչխառուներին, նրանց տուած պարտքը թոյն համարելով, հացը՝ հարամ... ուրեմն թոյլ չը տանք, որ վաչխառուների զզուելի ճանկերը աւելի եւս խրվեն մեր արիւնաքամ գիւղացու մարմնի մէջ...

Ամենից առաջ մեր քաղաքն է պարտական օգնելու։ Թող փոքրիկ ու աղքատիկ Ախալքալաքը, որ այսպիսի դէպքերում միշտ պատաւոր տեղ է բռնել, ապացուցանէ, որ ինքը խոռվել է ոչ թէ իր գաւառի գիւղերից, ինչպէս ուզում են ցոյց տալ սրիկայ լրերը, այլ ընդհակառակը՝ զզվել եւ երես է դարձրել հէնց իրանցից, աշխարհակեր ցեցերից։ Մանաւանդ պարտական են օգնելու ցորենի առեւտուր անողները, որոնք գիւղացու արիւն-քրտինքով վաստակած ցորենը առնում, տանում, այնքան հեռացնում են նրանից...

Թող օգնութեան հասնէ մեր կրթված դասակարգը. խօսքս մտքով եւ սրտով իսկական կրթուածների մասին է եւ ոչ թէ «վարժված» ДѢлецъ-ների։ Մեր փոքրիկ Ախալքալաքն էլ Բագուում, Բաթումում եւ այլ տեղեր ինտելիգենտ անդամներ ունի, որոնք հազարներ են ստանում եւ ոմանք նոյն իսկ հարստացել են. թող նրանք թէ անմիջապէս եւ թէ իրանց բարեկամների միջոցով զանգահարեն հարուստների սրտերը, այն հարուստների, որոնց կըրծքում մարդկային սիրտ կայ եւ ոչ թէ միայն մի կտոր միս...

Թող նրանք օգնութեան հասնեն իրանց հայրենի գաւառին։

Սալլիւմեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մարտի 4-ին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում կայացաւ վաճառականների ընդհանուր ժողովը։ Կարդացված հաշուից երեւաց, որ անցեալ տարի ընկերութիւնը ստացել է ընդամենը 179,269 ր. 4 կոպէկ։ Ծախսվել է ընկերութեան զանազան պէտքերի համար 26,800 ռուբլի։ Անցեալ տարի առեւտրական դպրոցի բացման եւ պահպանութեան համար տրված է 158,000 ր., իսկ առեւտրական ընկերութիւնը ներկայումս ունի սեփական դրամագլուխ 6,600 ռուբլի։ Հաշուից յետոյ հաստատվեց վերատուղող յանձնաժողովի զեկուցումը։ Ապա տեղի ունեցան ընտրութիւններ։ Ընդհանուր ժողովը միաձայն առաջարկեց նորից պ. Դաւիդովի թեկնածութիւնը։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին վաճառականական աւագ Ե. Դաւիդով, նրա օգնական՝ Ց. Շադինով եւ Ե. Ակօպով։ Թիֆլիսի կազեննայա պալատի ընդհանուր ատեանի անդամներ ընտրվեցին՝ Ց. Ծովիանեան եւ Ա. Փրիդօնով եւ կանդիդատ պ. Ալիբէգեան։ Ապա պ. Ալիբէգեան, մատնացոյց անելով այն հանգամանքի վրա, որ յունվարի 5-ին լրացաւ Ե. Դաւիդովի 25-ամեակը վաճառականական աւագի պաշտօնում, առաջարկեց ժողովին առեւտրական դպրոցին կից երեք ստիպենդիաներ նշանակել Ե. Դաւիդովի անուան, տալ նրան դովասանական թուղթ քան եւ հինգամեայ ծառայութեան համար։ Ժողովը վճռեց առանձին յանձնաժողով ընտրել, որին եւ յանձնել պ. Դաւիդովի յօբելեանը տօնելու հարցը։ Այդ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին Ա. Թայիրով, Ի. Ծովիանեան, Ե. Ծատուրեան, Ա. Միլով, Ե. Ակօպով, Ս. Կաֆեանց եւ պ. Ալիբէկեանց։

—

Մարտի 5-ին Թիֆլիսի դատաստանական պալատի քրէական բաժնում քննվում էր չորրորդ անգամ Իշխան Տուսիեվի, Բարաթովի, Գէօրգի Օսիտովի եւ Ալէքսանդր Տէր-Շմաւոնովի գործը, որոնք մեղադրվում են Գաբաեվին սպանելու մէջ։ Դատաստանական պալատը այս անգամ էլ Բարաթովին եւ Տէր-Շմաւոնովին գլխաւոր յանցաւորներ համարեց սպանութեան գործում, իսկ Օսիտովին եւ Տուսիեվին յանցակիցներ։ Բարաթով եւ Տէր-Շմաւոնով դժգոհ մնացին վճռից եւ կամենում են գործն անցկացնել սենատ։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից. «Երէկ, մարտի 1-ին, գրականագէտների միութիւնը չնորհաւորական հեռագիր ուղարկեց Լ. Ն. Տոլստոյին՝ նրա առողջանալու առիթով։ Նոյն ժողովում զեկուցվեց, որ միութեան միջնորդութիւնը՝ թոյլ տալու նուիրատուութիւններ հաւաքել Բէլինսկուն եւ Շեվչենկոյին արձաններ կանգնեցնելու համար՝ մերժված է։ Ապա ժողովը լիազօրութիւն տուեց կոմիտէին դիմել երդուեալ հաւատարմատարների խորհուրդներին եւ խնդրել քննութեան ենթարկելու այն հարցը, թէ էտիկային համաձայն են վարվում արդեօք այն փաստաբանները, որոնք զանազան անձերի կողմից դատ են բաց անում մամուլի ներկայացուցիչների դէմ՝ մեղադրելով նրանց դիֆֆամացիայի մէջ»։

—

Փետրվարի 7-ին փակվեց կովկաս-անդրկովկասեան գործերին վերաբերեալ հատագումար ժողովը։ Այդ համաժողովում, ի միջի այլոց, վճռվեց պակասեցնել Պարսկաստան արտահանվող չաքարի տեղափոխութեան համար այժմ գոյութիւն ունեցող տարիֆը։

—

Փետրվարի 28-ին «Новое Время» լրագիրը մեծ շուքով տօնեց իր 25-ամեակը։ Ցերեկով Ա. Սուվորի բնակարանում հաւաքվեց չնորհաւորողների մեծ բազմութիւն։ Նրանց մէջ, ի միջի այլոց, կային ֆինանսների մինիստր Ս. Իւ. Վիտտէ, Ի. Ն. Դուրնովո, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրի օգնական Մեասօեդով—Իվանով։ Գրականագէտներ, բացի լրագրի աշխատակիցներից, համեմատաբար քիչ էին, այն է Դ. Մորդովցեվ, Ա. Պոտէխին, Կ. Սլուչէվսկի, պ. Նեմիրովիչ։ Վերջինս մատուցեց ժէտոն դրամատիական գրողների ընկերութիւնից։ Երեկոյեան գրական-դեպրուեստական ընկերութեան թատրոնում տրվեց բաուտ. թատրոնի դահլիճները շքեղ կերպով զարդարված էին։ Բաուտն սկսվեց 9 ժամին կոնցերտային բաժնով։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր է, որ Ախալքալաքի գաւառի վնասված գիւղացիներից խումբ-խումբ գալիս են այստեղ աշխատանք որոնելու։ Երեւակայեցէք, փող չը լինելու պատճառով, նրանք Ախալքալաքից մինչեւ այստեղ ոտով են եկել։ Այստեղ էլ բանուորի այնքան շատ պահանջ չը կայ, որ խեղճերը աշխատեն. առանց այն էլ այստեղ շատ բանուորներ օրերով անգործ են մնում։ Պարապ լինելու պատճառով՝ եկուորները ամբողջ օրը փողոցներում են շրջում, կամ պատերի տակ նստում»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Ինչպէս լսում ենք, տեղիս սիրողների խումբը պատրաստվում է զատկական տօներին ներկայացնել Սունդուկեանցի «Պէպօ» կոմեդիան, ի յիշատակ նրա 30-ամեայ գոյութեան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից հեռագրում են «Times» լրագրին, թէ սուլթանը արգելեց տեղական թատրոններում ներկայացնել ողբերգութիւններ եւ դրամաներ այն պատճառով, որ իբր թէ նրանք չափազանց գրգռում են հասարակութիւնը, մինչ դեռ հէնց այժմ անհրաժեշտ է խաղաղ պահել մտքերը։ Թոյլ է տուած ներկայացնել միայն կատակերգութիւններ, ֆարսեր եւ օպէրէտներ։

—Կեսրերի մինիստրութիւնը կամենում է վարձատրել չէխերին նրա համար, որ նրանք հրաժարվեցին օբստրուկցիայից եւ համաձայնեցին աջակցութիւն ցոյց տալ կառավարութեանը պարլամէնտում։ Ենթադրված վարձատրութիւններից մէկը հասարակական աշխատանքների նոր մինիստրութիւն կազմելն է, որ պէտք է յանձնվի չէխ Կաֆտանին։ Բացի սրանից չէխերին խոստացված է, որ Ֆրանց-Յովսէֆի կայսրը կայցելէ Պրագա՝ ներկայ լինելու Վլտաւա գետի կամրջի բացմանը, որ չինել է չէխական ժողովուրդը։

—Հեռագիրը արդէն հաղորդեց, որ Բօտա եւ Կիտչեներ բանակցութիւններ են վարում միմեանց հետ։ Ակներեւ է, որ Անգլիան առաջին քայլերն է անում հարաւ-աֆրիկական պատերազմին վերջ տալու համար եւ բացի Կիտչեներ՝ յանձնարարել է նաեւ սէր Ալֆրէդ Միլներին բանակցութիւններ սկսել խաղաղութեան վերաբերմամբ բօէրական զօրապետների հետ։ Այս առիթով «Indépendance Belge» ասում է հետեւեալը. «Եթէ յիրաւի Մեծ-Բրիտանիան կամենում է վերջ դնել պատերազմին եւ, ըստ կարելւոյն, գործել յօգուտ երկու պատերազմող կողմերի եւս, այն ժամանակ չէ կարելի չը խոստովանել, որ վերին աստիճանի անյաջող ընտրութիւն է արել նա՝ յանձնելով միջնորդի պաշտօնը Միլներին, որ արդէն ուղեւորվել է Պրետորիա բանակցութիւններ սկսելու։ Դժուար կարելի է հաւատալ, որ նա աջողութեամբ գլուխ բերէ յանձն առած գործը։ Բօէրները ամենամեծ անվստահութիւն են տածում դէպի Ալֆրէդ Միլներ, Չէմբերլէնի այդ հաւատարիմ արբանեակը, որ այնպիսի կորստաբեր ազդեցութիւն ունեցաւ հարաւային Աֆրիկայում տեղի ունեցած անցքերի վրա։ Առաջ քան թէ ծագել էր պատերազմը, առաջ քան թէ վերջացել էին բանակցութիւնները Լօնդօնի եւ Պրետորիայի մէջ ուլտիմէդումների դրութեան մասին, սէր Ալֆրէդ Միլներ արդէն արել էր ամեն ինչ, որ պատերազմը անխուսափելի դառնայ։ Ճշտութեամբ հաստատված է արդէն, որ նա կեղծում էր Կրիւգէր եւ Շեէյն նախագահների ասածների միտքը Լօնդօն հաղորդելիս. հաստատված է նմանապէս, որ նրա անճիշտ եւ դիտաւորեալ լուսաբանութիւնները հարաւ-աֆրիկական գործերի վերաբերութեամբ սուր կերպարանք տուին իրերի դրութեանը եւ պատերազմի պատճառ դարձան։ Երբ Չեմբերլէնն նշանակեց Միլներին երկու նոր նուաճված գաղթականութիւնների նահանգապետ եւ գլխաւոր կառավարիչ, բոլորքներ լսվեցին մինչեւ անգամ իմպերիալիստների բանակից։ Եւ յիրաւի, դա մի անգութ ծաղր էր—կառավարիչ նշանակել մի այնպիսի մարդու, որ ամենացինիքական կերպով անում էր ամեն ինչ բօէրներին վնասելու համար։ Ուղարկել այժմ նոյն Ալֆրէդ Միլներին խաղաղութեան մասին բանակցութիւններ վարելու բօէրների հետ՝ նշանակում է մի նոր եւ բոլորովին զուր վիրաւորանք հասցնել յոգեվածներին։ Բօէրները չեն հաւատում ոչ Միլներին, ոչ Սէսիլ Ռոդսին եւ ոչ Չեմբերլէնին։ Նրանց հետ բանակցութիւններ վարելու համար հարկաւոր են այլ, աւելի բարեխիղճ մարդիկ։

—«Temps» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, թէ այնտեղ տների պատերին կպցրած են եղել երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան կողմից ազդարարագրեր, որոնցով մահմեդական ազգաբնակութեանը տեղեկութիւն էր տրվում առաջիկայ շարժման մասին գոյութիւն ունեցող բէժիի դէմ։ Ազդարարագրերը հրաւիրում էին քրիստոնեաներին հանգիստ մնալ, որովհետեւ ենթադրված շարժումը նրանց դէմ չէ եւ նրանց ոչ մի վնաս չի պատճառի։

—Մեծ աղմուկ են բարձրացրել Իտալիայում այն տեղեկութիւնները, որոնք ստացված են Զինաստանից եւ տպագրված մի քանի լրագիրներում։ Այդ տեղեկութիւնները վերաբերում են իտալական զօրքի դրութեանը Զինաստանում։ Դուրս է գալիս, որ իտալական զօրքերը մեծ զրկանքներ են կրում այնտեղ. նրանք տանջվում են ցրտից ու քաղցից. նրանց շորերը ցնցոտիներ են. կօշիկներ չունեն շատերը։ Իտալական զօրքի գլխաւորները, այդ տեղեկութիւններին նայելով, ստիպված էին դիմել օտար զօրապետների մեծահոգութեանը, որպէս զի հնար ունենան հայթայթելու իրանց զինուորների ամենաանհրաժեշտ պիտոյքները։ Բոլոր իտալական լրագիրները, թէ մինիստրութեան կողմնակիցները եւ թէ հակառակորդները, բացատրութիւն են պահանջում այս մասին զինուորական մինիստրութիւնից։ «Շատ ցաւալի կը լինէր, ասում է «Capitan Fracassa» լրագիրը, ծախսել 12 միլիոն ֆրանկ նրա համար միայն, որպէս զի ցոյց տանք օտարներին մեր աղքատութիւնը»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Խեղճ թղթակիցներ։

Որքան դժուար է նրանց համար գրել տեղական զեղծումների դէմ։

—Ինչ անենք, գրում է մեր թղթակիցը, լրագիրը ուզում է, որ մենք ներկայացնենք գաւառական կեանքը իր բոլոր դրական եւ բացասական կողմերով։ Իսկ գիտէք՝ դա ինչ զոհեր է մեզնից պահանջում։

—Քիչ մնաց ինձ ծեծէին, գրում է մի ուրիշը, իմ այն թղթակցութեան համար, որ գրել էի տեղական տղրուկների եւ գողերի դէմ։

—Ես ստիպված եմ իմ պաշտօնը թողնել, գրում է երրորդը, կամ լռել այստեղի խայտառակ գործերի մասին։

—Մի զետեղեցէք իմ անունը, խնդրում է չորրորդը։

Ծանր է թղթակցի դրութիւնը։ Շատ ծանր է։ Իսկ եթէ նրանք էլ լռեն, այն ժամանակ ինչպէս պէտք է իմանանք, թէ ինչ է օր օրի վրա կատարվում գիւղում։

Սակայն միմիայն մեզանում չէ այդպէս։ Ուրիշ տեղերում էլ թղթակիցը անմխիթար վիճակի մէջ է։

Պատմեմ մի նորագոյն փաստ Հիւսիսային կովկասի բարքերից։

—

Մի տարի սրանից առաջ, մարտի 1-ին, Վլադիկավկազում հրատարակվող «Казбекъ» լրագրի մէջ տպված էր մի յօդուած մի գիւղի մասին։

Թղթակիցը պատմում էր իր յօդուածում, որ գիւղի մէջ միտք է ծագել դպրոց չինելու եւ որ այնտեղ գտնվող մի քանի անձինք չը համակրելով այդ մտքին, հանդիսացել են իբրեւ բարի գործին խանգարողներ։

Յօդուածի մէջ չէին յայտնված ոչ մի անուն եւ ազգանուն։ Մեղադրանքը ուղղված էր տեղական ինտելիգենտների դէմ։

Գիւղի ինտելիգենտներից մէկը, յատկապէս իր հացէին ընդունելով գրածը, ուղարկեց լրագրին մի հերքում, որը տպվեց նոյն թւականին։

Կարելի էր կարծել, որ դրանով բանը վերջացաւ եւ «խնդիրը սպառվեց»։

Սակայն ոչ։

Գիւղական ինտելիգենտը, մի անգամ հանդիպելով յօդուածագրին, նրան կծու նկատողութիւն արեց յայտնելով, որ յօդուածը ուղղված է յատկապէս նրա դէմ։ Յօդուածագիրը պատասխանեց, թէ դա յիշեցնում է «եկ ինձ բռնիր» առածը։

Կարելի էր կարծել, որ այս անգամ հարցը արդէն վերջնականապէս լուծվեց եւ վերջացաւ։

Ոչ։ Չը վերջացաւ։

Անցաւ մի քանի ժամանակ։ Ծննդեան տօներին յօդուածագիրը վերադառնում է հայրենի գիւղը՝ տօները այնտեղ անցկացնելու։ Եւ ահա Ծննդեան հետեւեալ օրը, դեկտեմբերի 26-ին, յօդուածագիրը ճաշակեց հայրենի գիւղի հրապոյրները։

Ինտելիգենտ գիւղացու եղբայրը, մի անգրագէտ մարդ, նկատելով, որ յօդուածագիրը անցնում է փողոցով, իսկոյն դուրս է թռչում իրանց տնից եւ վրա ընկնելով ոչինչ վատ բան չը սպառող յօդուածագրի վրա՝ հացնում է նրան հարուածներ։

—Ի՞նչ ես անում. ինչու՞ ես խփում, ինչ եմ քեզ արել, բացականչում է խեղճը, աշխատելով ազատվել վիրաւորանքներից։

—Այժմ կը խրատվես, խրոխտանում է հարուածողը, ես գիտես որ եմ (յայտնում է իր տունը եւ ազգանունը)։ Ես քեզ կը սպանեմ։

Փողոցում պատահած մարդիկ բռնեցին կատաղած յարձակվողին եւ յետ տարան։

Աղմուկ ընկաւ գիւղը։ Դուրս եկաւ, որ յօդուածագիրը բոլորովին անտեղի մի զոհ է, որ իր բարի ցանկութիւնների համար վիրաւորանքներ կրեց զուր տեղը։

Բայց եւ այնպէս գիւղացիները ցանկացան հաշտեցնել յարձակվողին եւ յօդուածագրին։

—Ինչու՞ դուք յարձակվեցիք, ինչու՞ վիրաւորեցիք, հարցրին անգրագէտ պարոնից։

—Որովհետեւ, պատասխանեց նա, այդ մարդը իր յօդուածով անարգել է իմ եղբօրը, իսկ մեր երեխաների պատկերները ուղարկել է տպելու մի լրագրում։

—Ի՞նչ լրագրում։

—Ահա այստեղ, ասաց անգրագէտը եւ ներկայացրեց «Нива» շաբաթաթերթի մի համարը, որտեղ զետեղված էր մի յայտնի նկարչի նկարած պատկեր, որը անկասկած ոչ մի կապ չունէր այդ գիւղի բնակիչների հետ։

—Այս պատկերը ձեզ չէ վերաբերում, հասկացրին հաշտեցնողները։

—Ես ինչ գիտեմ. ինձ այդպէս ասացին։ Իմ եղբայրը գիտէ այդ բոլոր գործը։ Ես իմ եղբօր կողմից վրէժխնդիր եղայ։

Եւ այն եւ այն։

—

Մեր թղթակիցների հետ պատահած դէպքերի շարքում կան աւելի եւս պերճախօս փաստեր։ Իսկ այն, ինչ կատարվեց մեր Ախալքալաքի թղթակիցների հետ, արդէն չափից դուրս վրդովեցուցիչ, եթէ չասենք սարսուռ եւ զայրոյթ պատճառող մի երեւոյթ էր իր այլանդակութեամբ։

Ամեն օր աւելանում է այդ փաստերի թիւը։ Արդեօք ինչ կունենանք վաղը։

Վրթին

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

5 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կրօնչտադտից, Կալուգայից եւ Լօձից հաղորդում են, որ այդ քաղաքներում տեղի են ունեցել հոգեհանգիստներ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլէպովի յիշատակին։

Մարտի 5-ին տեղի ունեցաւ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլէպովի մարմնի յուղարկաւորութիւնը դէպի Սէրգիեվսկի մայրեկեղեցին, ուր պատարագ մատուցեց միտրոպոլիտ Անտոնի։ Պատարագին ներկայ էին Մեծ-Իշխաններ Վլադիմիր Ալէքսանդրովիչ եւ Միխայիլ Նիկոլայեվիչ, գերմանական, աւստրիական, դանիական, բուլգարական, բելգիական եւ նիդերլանդական դեսպանները։ Մայր-եկեղեցուց մարմինը տեղափոխվեց Նիկոլայեվսկի կայարանը՝ Մոսկվա ուղարկելու։ Հանդէսի առաջից գնում էին մասնաւոր եւ բէալական դպրոցների աշակերտները եւ ապա գիմնազիստները. դագաղը տանում էին ձեռների վրա գիմնազիաների աշակերտները. ճանապարհի վրա կանգնած էր անհամար բազմութիւն։ Կայարանի գաւթում կանգնած էին իգական ուսումնարանների աշակերտուհիները։ Կայարանում կատարված հոգեհանգստից յետոյ՝ դագաղը ուղարկվեց Մոսկվա, ուր հանգուցեալի մարմինը կը յանձնվի հողին Դրագոմիլովեան գերեզմանատոցում։

ԲԵՐԼԻՆ։ Բիւլլոտէն կայսրի առողջական վիճակի մասին. «Վէրքը համարեա վերջնականապէս ծածկվել է. երեսի աջ կողմի ուռոյցքը փոքրացել է, բայց դեռ բոլորովին չէ իջել։ Ընդհանուր դրութիւնը լաւ է»։

ՄԱԴՐԻԴ։ Թագուհի խնամակալուհին ընդունեց ռուսաց դեսպանին, որ յանձնեց նորին մեծութեանը Թագաւոր Կայսրի նամակը, որի մէջ բարեկեցութեան ցանկութիւն է յայտնվում Սպանիային եւ արքայական ընտանիքին. ապա Թագաւորին յանձնվեց ս. Անդրէյ Նախակոչի շքանշանը։

ՍՎԱՏԱՈՒ։ Գերմանական հիւպատոսի առաջարկութեամբ՝ Խսինինանի շրջանային կառավարութիւնը պաշտօնանկ է արված քրիստոնեաներին թշնամաբար վերաբերվելու եւ գերմանական պահանջների կատարումը ձգձգելու համար։ Խօնանում գլխատված են երկու չինայիներ՝ գերմանացիների դէմ գործելու պատճառով։ Ժամանակում բռնված են երկու հոգի նրանց կողմնակիցներից,

ԿԱՊՇՏԱԴՏ։ Վերջին 48 ժամվայ ընթացքում տեղի ունեցան ժանտախտից հիւանդանալու 9 նոր դէպքեր։

Կ. ՊՕԼԻՍ։ Սանիտարական խորհրդի առիթով ծագած վէճի պատճառով՝ պետութիւնների դեսպանները երէկ Բ. Դրանը ներկայացրին մի միացեալ յայտագիր, որի մէջ պնդում են այն սկզբունքի վրա, թէ ընդհանուր վերատեսչի, տեսուչների եւ գլխաւոր հաշւապահների նշանակումը կախված է միմիայն բարձրագոյն սանիտարական խորհրդից, իսկ Բ. Դրանը պատկանում է միայն իրաւունք հաստատելու այդ անձերի նշանակումը։ Այսուամենայնիւ դեսպանները յայտնում են, որ պատրաստ են, իբրեւ բացառութիւն, ընդունել Բ. Դրան թեկնածուին սանիտարական տեսչի պաշտօնի համար, եթէ վերոյիշեալ սկզբունքը պաշտօնապէս կընդունվի Բ. Դրան կողմից։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Դէվէտի ոյժերը դուրս եկան Սենեկալից եւ շարունակեցին ճանապարհը՝ բաժանվելով փոքր զօրաբաժինների։

ՄՕՍԿՎԱ։ Մարտի 6-ին բացվում է թատրոնական գործիչների համաժողովը։

ԿԱԶԱՆ։ Քաղաքագլուխ նորից ընտրված է կամերգէր Լէբէդեվ։

6 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ» լրագրում տպված է. «Ի նկատի ունենալով կայսրութեան զանազան քաղաքներում վերջին ժամանակներս տեղի ունեցած փողոցային անկարգութիւնների մանրամասնութիւնների մասին տարածված սուտ լուրերը, ներքին գործերի մինիստրը անհրաժեշտ է համարում յայտնել ի գիտութիւն ընդհանուրի հետեւեալ փաստերը, որ կան նրա մօտ տեղական իշխանութիւնների զեկուցման հիման վրա։ Փետրվարի 19-ին Պետերբուրգում, պատարագից եւ ընդհանուր մաղթանքից յետոյ Կազանսկի տաճարում, տաճարում գտնված ուսանող երիտասարդութեան մի մասը, որին միացան տաճարի գաւթում կանգնած անձինք, խմբվեց Կազանսկայա հրապարակի վրա՝ տաճարի եւ սկվերի միջեւ, կալօննադայի թեւի մօտ, եւ խմբի մէջ գտնվող մի քանի անձինք աշխատում էին ճառեր արտասանել։ Ոստիկանութեան պահանջին՝ ցրվել, խմբվածները մերժողական պատասխան տուին եւ խմբի մէջ լսվեց՝ «Պարոններ. բոլորս սեղմված խմբով դէպի աջ, Նէվսկի պրոսպէկտով» կոչը։ Հետեւելով այդ կոչին, խումբը երգեր երգելով դիմեց դէպի Նէվսկի պրոսպէկտը, գրաւելով փողոցի մի մասը եւ ամբողջ տրոտուարը։ Անմիջապէս կանչված ոստիկանական զօրաբաժնի միջոցով այդ խումբը մղվեց դէպի Պետերբուրգի քաղաքային դումայի բագը, եւ ոչ մէկը այդ խմբից ոչինչ վերք չը ստացաւ։ Դումայի բագի մէջ խմբի ժամանակիցները ցուցակագրվեցին, թւով 244 մարդ, որոնցից մայրաքաղաքի զանազան բարձրագոյն դպրոցների ուսանողներ էին 71, զանազան իգական կուրսերի ունկնդիրներ՝ 128, ուրիշ կանայք՝ 20 եւ օտարներ՝ 25. ցուցակագրվածներն ապա իրանց տներն արձակվեցին։ Վերոյիշեալ անկարգութեան մասնակիցների մասին քննութիւն է սկսված, որին պատշաճաւոր ընթացք է տրված։—Նոյն թւին Խարկով քաղաքում, տաճարում եւ համալսարանական եկեղեցում մաղթանքն աւարտելուց յետոյ, երբ աղօթողները դուրս էին գալիս տաճարից, նրանցից անջատվեցին համալսարանի, տեխնոլոգիական եւ անասնաբուժական ինստիտուտների 100 ուսանողներ եւ խմբով առաջ շարժվեցին դէպի համալսարանի շինութիւնը երգեր երգելով։ Եւ որովհետեւ նրանք հրաժարվեցին ենթարկվել ոստիկանութեան պահանջին ու ցրվել, այդ անձանց շրջապատեցին կանչված հարիւր կազակներ եւ մտցրին նրանց ոստիկանական վարչութեան շինութիւնը։ Կամաց կամաց կազմվեց մի համախմբումն ուսանող երիտասարդութիւնից, որ պահանջում էր բաց թողնել բռնվածներին։ Ի նկատի ունենալով, որ ամբոխը, որին միացան եւ շատ հետաքրքիրներ, հրաժարվեց ցրվելուց, դէպի այդ անկարգութիւնը զրգելու մէջ նկատված անձինք նոյնպէս ձերբակալվեցին։ Երեկոյեան ուսանող երիտասարդութիւնից բաղկացած խումբը, որի հետ կրկին միացաւ հետաքրքրվողների մի նշանաւոր թիւ, աշխատում էր ցոյց անել «Южный Край» լրագրի խմբագրատան շինութեան մօտ, ուր դիմեց երգեցողութեամբ, ճիչերով եւ շոյցներով, բայց իր ժամանակին շրջապատվեց պահանջված զօրքերով եւ տարվեց պոլիցիմէյստէրի վարչութիւնը ցուցակագրվելու համար։ Այդ վերջին խմբի հեռանալուց յետոյ, փողոցում մնացածների հետ նորից միացաւ զանազան կոչման տէր մարդկանց ամբոխը, որը դրամատիական թատրոնի մօտ աղաղակում էր, աղմուկներ էր անում եւ երգեր էր երգում։ Կանչված զօրքերը յետ մղեցին ամբոխը դէպի հարեւան փողոցները եւ ապա ցրվեցին նրան։ Թէպէտ եւ նահանգապետին ուղղած յայտարարութիւններ մատուցվեցին ստացված այլանդակումների եւ հարուածների մասին, բայց ստուգելուց եւ բժշկական քննութիւնից յետոյ հաստատվեց միայն մէկը։ Վերեւ նկարագրած անկարգութիւնների մասնակիցների մասին եւս քննութիւն է սկսված, այնպէս որ 136 ձերբակալվածներից 24 մարդ կալանաւորված են, իսկ մնացածներն արձակված են։—Փետրվարի 22-ին եւ փետրվարի 23-ին Մոսկվայում, ցերեկվայ 12 ժամին, հին համալսարանի շինութեան մօտ սկսեցին հաւաքվել սկզբում համալսարանի ուսանողները, եւ ապա այլ բարձրագոյն դպրոցների ուսանողները, զանազան իգական կուրսերի ունկնդիրները եւ ուրիշ կանայք եւս։ Չը նայելով ոստիկանութեան պահանջին ցրվել, ամբոխը գնալով աճում էր եւ ցերեկվայ մօտ մէկ ժամին, յետ մղելով ծառաներին դրսի դռներից, ներս խուժեց համալսարանի դրսի բակը եւ ապա, կոտրելով դռները, թւով մօտ երեք հարիւր մարդ, ներս խուժեց ակտի դահլիճը, ուր բացեց համաժողովի նիստը, հրաւիրելով այդ ժողովին այն ընկերներին, որոնք կանգնած էին փողոցում եւ բակում, նոյնպէս մօտ 300-ից աւել մարդ, մի եւ նոյն ժամանակ գումարվածները զրգռում էին հասարակութիւնը, գցելով նրանց մէջ զանազան կոչնաթղթեր։ Թէ ոստիկանութեան յորդորները փողոցում, նոյնպէս եւ տեսչութեան յորդորները ակտի դահլիճում չը կարողացան ստիպել հաւաքվածներին ցրվելու եւ վերջ տալու անկարգութիւններին, այդ պատճառով էլ համախմբումը փողոցից եւ համալսարանի բակից չրջապատվեց ոստիկանութեամբ եւ տարվեց մերձակայ մանէժը։ Համախմբումի մասնակիցները, երբ նրանք դուրս եկան համալսարանի բակը, նոյն կարգով տարվեցին նոյն մանէժը, եւ ապա բոլորը ցուցակագրվեցին, թւով 630 մարդ, որոնցից 517 զանազան բարձրագոյն դպրոցների ուսանողներ էին, 12 օտար անձինք եւ 101 կանայք։ Բոլոր բռնվածները շարունակում էին աղմուկներ հանել եւ յանդուգն պահել իրանց, չը հնազանդվելով ոստիկանութեան ոչ մի պահանջին։ Երեկոյեան մօտ՝ կանանց առաջարկվեց հեռանալ մանէժից եւ ցրվել իրանց տները, որից օգուտ քաղեցին 93 կանայք, իսկ մնացած 8 կանայք ցանկացան մնալ դիշերելու մանէժում ուրիշ բռնվածների հետ միասին։ Փետրվարի 24-ին առաւօտեան, բռնվածների թւից 53 հոգի բանտ ուղարկվեցին պահապանների ուղեկցութեամբ. փետրվարի 24-ի գիշերը մէժէվոյ ինստիտուտի 21 ուսանողներ յանձնվեցին ուսումնարանական իշխանութեանը, իսկ մնացած 463 մարդիկ խումբ խումբ ուղարկվեցին փոխադրական բանտը։ Փետրվարի 24-ին, զլխաւորապէս ուսանող երիտասարդութիւնից բաղկացած ամբոխը, որի թիւը երբեմնակի հասնում էր 700 հոգու, փորձում էր յարաբերութիւն հաստատել մանէժում գիշերով ձերբակալվածների հետ, բանակցելով նրանց հետ այդ շինութեան մի քանի պատուհաններում իրանց ձեռքով ջարդած ապակիների միջով։ Ոստիկանութիւնը, իրան օգնական ունենալով հարիւր կազակներ, բազմիցս մաքրում էր այդ տեղը խմբվածներից։ Բայց երեկոյեան մօտ 5 ժամին, կամաց կամաց հաւաքվող խումբը, մօտաւորապէս 300 մարդ, սկսեց առաջ ընթանալ Նիկիտսկայա փողոցով եւ Տվերսկոյ բուլվարով երգերով եւ աղաղակներով, իսկ այնտեղից դէպի Տվերսկայա փողոցը, ուր, Բրիւսովսկի նեղ փողոցի մօտ յետ մղվեց դէպի կողքի փողոցները եւ ցրվեց։ Մօտ մէկ ժամին, փետրվարի 24-ի գիշերը, աւելի քան 100 ուսանողներից եւ կանանցից բաղկացած ամբոխը, որին չէին թոյլ տուել անցնել Տվերսկայա փողոցով, անցաւ երգելով Պետրովկա փողոցով եւ յետ մղվեց պոլիցիայից Պետրովսկիի քաղաքագրան մօտ։ Կիրակի, փետրվարի 25-ին, զանազան դասակարգերին պատկանող մարդկանցից բաղկացած ամբոխը, ղեկավար ունենալով բարձրագոյն դպրոցների ուսանողներին եւ բարձրագոյն իգական կուրսերի ուսանողուհիներին, օրվայ ընթացքում անկարգութիւններ էր անում քաղաքի կենտրոնական մասերում, փորձելով մտնել Տվերսկայա փողոցը. այդ փորձերին արգելք եղան ոստիկանները եւ երկու հարիւր կազակներ։ Երեկոյեան մօտ, երբ անզուսպ համախմբումը սկսեց ջարդել փողոցի լապտերների ապակիները Բոլշայա Նիկիտսկայա փողոցի եւ Սարատնոյ բուլվարի վրա, այն ժամանակ անկարգութիւններին կատարելապէս վերջ դնելու նպատակով եւ ի նկատի ունենալով գիշերային ժամանակը, ոստիկանութեանը օգնելու համար կանչվեցին երկու էսկադրոն զօրքեր եւ սկսվեց անկարգութիւններ անողների ձերբակալումը։ 400 հոգուց բաղկացած մի խումբ չրջապատվեց եւ տարվեց մանէժ, իսկ միւս խումբը, որը անկարգութիւններ էր անում Սրէտենսկի քաղաքագրների մօտ, Վօրօբիէվի տունը տարվեց։ Մանէժում եւ Վօրօբիէվի տանը բռնվածներին քննելուց յետոյ, ոստիկանութիւնը ձերբակալեց 16 ուսանող, երկու նախկին ուսանող եւ մի բժիշկ, իբրեւ խառնակութիւնների ղեկավարների, իսկ միւսներին, անունները գրելուց յետոյ, բաց թողեցին տները. իսկ ընդամենը, վերոյիշեալներին էլ մէջը հաշված, այդ օրվայ ընթացքում, ոստիկանութեանը անհնազանդութիւն ցոյց տալու եւ խառնակութիւնները ղեկավարելու համար ձերբակալված են 34 հոգի, որոնց թւում համալսարանի եւ ուրիշ բարձրագոյն դպրոցների ուսանողներից 21, կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներից 9 եւ կողմնակի անձերից 4։—Փետրվարի 26-ին, ցերեկվայ ժամը մօտ երկուսին, Օխոտնօրեադսկայա հրապարակում ժողովվեց մի ամբոխ, բաղկացած մօտ 150 հոգի ուսանողներից, կանանցից եւ կողմնակի անձերից. ոստիկանութիւնը բաժանբաժան արեց այդ ամբոխը եւ նրա մի մասը, 85 հոգուց բաղկացած, յետ յետ մղելով մտցրեց մանէժը, ուր եւ գրի անցրեց բոլորի անունները։ Այդ 85 հոգուց 31-ը ուսանող դուրս եկան, որոնցից երկուսը, իբրեւ ամենից շատ մեղաւորներ, ձերբակալվեցին։ Նոյն օրը ոստիկանական բաժանմունքներում կալանաւորվեցին քաղաքի զանազան մասերում փողոցային խառնակութիւններ անելու պատճառով 25 հոգի, որոնց թւում 15 ուսանող. այդ բռնվածներից պահեցին կալանաւորված երկու տղամարդ եւ մի կին։—Կիրակի, մարտի 4-ին, ցերեկվայ ժամի 2-ին, Տվերսկոյ բուլվարում ոստիկանութիւնը չրջապատեց եւ հարեւան տան բակը մտցրեց 70 հոգուց բաղկացած մի ցուցարար ամբոխ, որի մեծամասնութիւնը կազմում էին տեխնիկական դպրոցի ուսանողները։ Երբ ոստիկանութիւնը ձերբակալում էր այդ խումբը, ժողովվեց կանանց մի խումբ, որ աշխատում էր հետաքրքիր անցորդների համակրութիւնը գրաւել, դատապարտելով ոստիկանութեան վարմունքը. այդ կանայք, թւով 9 հոգի, նոյնպէս ձերբակալվեցին։ Այնուհետեւ խառնակութիւններին մասնակցողների, թւով 67 հոգի,—անունները գրեցին եւ նրանցից ձերբակալեցին տեխնիկական դպրոցի 11 ուսանող, Մոսկվայի համալսարանի 1 ուսանող եւ երեք կանանց։ Այդ օրերի ընթացքում Մոսկ-

վայում տեղի ունեցած խառնակութիւնների ժամանակ յանցաւորներին բռնելիս ու ձերբակալելիս ոչ մի ընդհարումն եւ կռիւ չէ եղել ամբոխի եւ ոստիկանութեան ու նրան օգնութեան կանչված զինուորական ոյժերի մէջ։ Բոլոր յանցաւորների վերաբերմամբ քննութիւն են կատարում համապատասխան ուսումնարանական վարչութիւնները եւ կառավարչական իշխանութիւնները։—Մարտի 4-ին, Ս.-Պետերբուրգում, առաւօտեան ժամի 11-ին մօտ, սկսեցին Կազանսկի մայր տաճարին մօտենալ զանազան դասակարգերից բաղկացած խմբեր, որոնք տեղաւորվեցին տաճարի մէջ, նրա շուրջը եւ հրապարակում։ Ժամի 12-ի մօտերքը այդ ամբոխին միացան մայրաքաղաքի բարձրագոյն դպրոցների բազմաթիւ ուսանողներ եւ ուսանողուհիներ, այնպէս որ 3,000 հոգուց բաղկացած մի ամբոխ բռնեց ամբողջապէս տաճարի բակը, գաւիթները, եւ կողքի պարտէզն ու փողոցանցքերը։ Ոստիկանութիւնը պահանջում էր ներկայ եղողներից, որ ցրվեն, բայց նրանց մեծամասնութիւնը ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում այդ պահանջների վրա։ Այնուհետեւ լսվեցին բացականչութիւններ եւ աղմուկ ու աղաղակներ բարձրացան, ուստի ոստիկաններից եւ կօզակներից բաղկացած մեծ խումբ կանչվեց, որ եւ բոլորովին անջատեց հրապարակում համախմբածներին նրանց շրջապատող եւ մեծ մասամբ Նեվսկիյ Պրոսպեկտում կանգնած հասարակութիւնից։ Երբ ոստիկանների եւ կօզակների մեծ խումբը մօտեցաւ, շրջապատված ամբոխը սկսեց յետ-յետ գնալ դէպի տաճարի դուռը եւ զանազան առարկաներ նետել դէպի զօրքը եւ ոստիկանութիւնը։ Մի քանի ուսանողներ այդ ժամանակ փորձ արեցին բաց անել իրանց մօտ եղած եւ զանազան մակագրութիւններ կրող կարմիր եւ սպիտակ դրօշակները, որ իսկոյն նրանց ձեռքից խլեցին։ Մայր եկեղեցու աջ կողմից ամբոխի մի մասը կռիւ սկսեց ոստիկանների եւ կօզակների զօրաբաժնի հետ, գործելով ձեռնափայտերով, եկեղեցու գաւթի գորգերի վրայից վերցրած երկաթեայ ձողերով, նետելով մի եւ նոյն ժամանակ կրկնակօշիկներ, սառած ձիւնի գունդեր եւ քարեր։ Այս ժամանակ ամբոխի միջից նետված երկաթեայ անկոթ մուրճով վիրաւորվեց Նորին Մեծութեան կօզակների լէյբ-գվարդիայի գնդի 2-րորդ հարիւրեակի հրամանատար Եսաուլ Իսէեվ. հարուածը այնքան սաստիկ էր, որ յիշված օֆիցերը արիւնաթաթախ ստիպված էր դուրս գալ զօրքերի շարքից։ Այս տեսնելով՝ նրան շրջապատող կօզակները վայր իջան ձիերից եւ շարժվեցին դէպի հաւաքվածների կենտրօնը, որտեղ նրանց եւ հաւաքվածների մէջ տեղի ունեցաւ կռիւ։ Այդ ժամանակ աղմկարարների մի մասը մղվեց դէպի հրապարակը, շրջապատվեց ոստիկաններով եւ ուղարկվեց բանտ, իսկ միւս մասը մտաւ եկեղեցի, որտեղ մի քանիսը չը հանեցին գլխարկները եւ սկսեցին ծխել։ Եկեղեցու դռնապանի նկատողութեանը՝ այդ անկարգութեանը վերջ տալու մասին՝ ուսանողներից մէկը հարուած հասցրեց նրա երեսին։ Չը նայելով եկեղեցում սկսված անկարգութիւններին եւ աղաղակին, ժամասացութիւնը շարունակվեց մինչեւ վերջը։ Աղօթողների մեծ մասը շտապեց հեռանալ եկեղեցուց կողմնակի դռներով։ Սեղանի դռները փակելուց յետոյ՝ աւագ քահանան բարձրացաւ ամբիոնը անկարգութիւններ անողներին խրատելու համար, բայց անաջող, եւ երբ նա առաջարկեց դուրս գնալ եկեղեցուց, ուսանողներից մէկը, որ կանգնած էր աւագ քահանայի ետեւը, բռնեց նրա վերարկուի թեւից եւ խորհուրդ տուեց, որ, անհաճոյ դէպքերից խոյս տալու համար, ինքը հեռանայ եկեղեցուց։ Ապա ամբոխը յետ քաշվեց դէպի տաճարի յետին պատը՝ խորհրդակցելու համար գործողութեան եղանակի շարունակութեան մասին։ Մեծամասնութիւնը վճռեց մէկ-մէկ դուրս չը գալ եկեղեցուց եւ ոչնչացնել ամեն ինչ, որ կար նրանց մօտ եւ որ կարող էր ծառայել որպէս ապացոյց նրանց դէմ։ Այդ ժամանակ մտաւ ոստիկանութիւնը եւ հաշուեց մնացած ամբոխին, որ բաղկացած էր մօտ 300 հոգուց, հեռանալ եկեղեցուց եւ գնալ Կազանեան քաղաքամասի ոստիկանատունը։ Եկեղեցու առաջի հրապարակը մաքրվեց անկարգութիւն անողներից մինչեւ կէս օրվայ ժամի 1-ը, որից յետոյ ոստիկանութիւնը եւ կօզակները ստիպված էին մի քանի ժամվայ ընթացքում ցրվել Նեվսկի պրոսպէկտում, Սադովայա փողոցի եւ Պոլիցէյսկի կամուրջի միջեւ, դժբախտաբար, մեծ քանակութեամբ հաւաքված հետաքրքրվողներին, որոնք վերին աստիճանի դժուարացնում էին ոստիկանութեան գործողութիւնները։ Մարտի 4-ին ընդամենը ձերբակալված են 760 մարդ, որոնցից 339-ը մայրաքաղաքի բարձրագոյն դպրոցների ուսանողներ են, 377-ը՝ կանայք, առաւելապէս կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներ եւ 44-ը՝ կողմնակի անձինք։ Ամբոխի հետ տեղի ունեցած կռւի մէջ վիրաւորված է վերոյիշեալ եսաուլ Իսէեվը եւ ծանր հարուած է հասցրած պրիստաւ փոխ-գնդապետ Վիլչեվսկուն։ Հարուածները եւ վէրքեր ստացան նաեւ 20 ոստիկանական զինուորներ եւ 4 կօզակներ, բայց նրանց վէրքերը ծանր չէին, թէեւ բժշկական օգնութիւն հասցնել նրանց հարկաւոր էր։ Ձերբակալվածներից վիրաւորված են 18 տղամարդ եւ 14 կին։ Անկարգութիւններ առաջացնող յանցաւորների մասին կատարվում է քննութիւն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընկերութիւն
ԲՐՕԿԱՐ եւ ԸԱԿ.
Առաջարկում է իր յատկութեամբ յայտնի
ԳԼԻՑԵՐԻՆԻ
ՍԱՊՕՆ
Պահպանում է կաշուի փափկութիւնը եւ աւելացնում է նրա սպիտակութիւնը։
ԿՏՈՐԸ 20 ԿՈՊԷԿ
(15) 5—10

ԴԵՐԶԱԿ
Ընդունում է պատուէրներ եկեղեցական եւ քահանայական զգեստների։
Պանասեվիչա փողոց, № 35։ (չ։ ո.) 1—2

Cafe siller Kaiser Ferdinands platz
WIEN
ԿԸ ԾԱՆՈՒՑԱՆԵՄ
որ սրճարանիս մէջ կը պատրաստվին սուրճ, ամենաընտիր ռուսաց թէյ, խմիչքներ եւ քաղցրեղէններ։ Կան օտարազգի լրագիրներ։ 1—10

ՀՐԱՒԷՐ
Մարտի 11-ին, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին, Զուղուրէթի ս. Աստուածածնի եկեղեցում ժողով է լինելու՝ ուստի սրանով մեծապատիւ պ.պ. ծխականները առաջին անգամ հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցում ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ բ. մասին Թիֆլիսի՝
1—3 Գրիգոր ա. քահ. Մանդակունի

Մամուլի տակ է
Բժ. Վ. ԱՐՔՈՒՆՈՒ
,,ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԻ,,
Առաջին գրքոյկը
,,ՄԻ ԽՄԻՐ,,

ՏԱՓԻ-ԹԱՂԻ (Քամոյեանց) ս. Գէորգ եկեղեցու գաւթումը ծախվում է գործածութեան մէջ եղած Վրաստանի հին ազուռ։
3—3

,,ՄՈՒՐՃ,, ԱՄՍԱԳՐԻ
1889, 1890, 1891, 1892, 1893 թ. ամփոփ տարիները կարելի է ձեռք բերել 50—80% զիջումով։
Դիմել—Վիլեամինսկայա № 24, գրասենեակ Ա. Զարդարեանցի եւ Փ. Վարդազարեանի։
(չ. շ.) 12—20

Годъ X Годъ X

ВЪ ГОРОДѢ КАРСѢ
КАРССКОЙ ОБЛАСТИ
ОТКРЫТА ПОДПИСКА
НА ГАЗЕТУ
„КАРСЪ“
на настоящій 1901 годъ.

Газета „Карсъ“ въ 1901 году будетъ издаваться на тѣхъ-же основаніяхъ, какъ и въ минувшемъ году и по той-же программѣ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:
съ доставкою и пересылкою 3 руб. въ годъ.

Подписка принимается въ редакціи газеты „Карсъ“ въ городѣ Карсѣ, куда адресуютъ свои требованія и иногородные.

Газета „Карсъ“ имѣетъ ближайшею цѣлью всестороннее изученіе Карсской Области и распространеніе въ обществѣ вѣрныхъ и точныхъ свѣдѣній, какъ о нынѣшнемъ ея состояніи, такъ и о мѣропріятіяхъ, направленныхъ къ ея благоустройству. 1—3

ГАРМОНІИ
Высылаю во всѣ города Россіи какъ своей фабрики, такъ и кустарнаго производства, по самымъ умѣреннымъ цѣнамъ, цѣною отъ 30 коп. до 10 руб. При требованіи прилагать 20 р. задатокъ. Требованіе на сумму менѣе 25 руб. не исполняется. Адресъ: Тула, Веневская улица, магазинъ В. Д. Грецова.
Съ совершеннымъ почтеніемъ
3—10 В. ГРЕЦОВЪ

Լոյս տեսան
1. Ո՞Վ Է ՕԱՆՇԵՒՈՐԸ . . . . . 15 կ.
2. ԸՌՈՂՋ ՀՈԳԻՆ ԸՌՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ. . . 10 կ.
Ձանապարհածախս իւրաքանչիւրին 3 կոպէկ։ Արդիւնքը յատկացվում է Ախալցխայում հիմնվելիք աշխատանոցի օգտին։ Դիմել՝ Петербургъ, Владимірскій, 3 кв. 8. Д-ру А. С. Кечегьяну. 6—6

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագումի. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պոստով։
74—100

ԼՈՒՑՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ
Հատոր առաջին։—XVI—XVII դար
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ
Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 8—10

СПИСОКЪ ИЗДАНІЙ
ДЕПАРТАМЕНТА ЗЕМЛЕДѢЛІЯ
по прикладной энтомологіи

къ 1-му января 1901 г.

Краткое наставленіе для уничтоженія саранчи, прусика и кобылокъ (съ 21 рис.). 1894 . . . —
Саранча, прусъ и вреднѣйшіе виды кобылокъ (съ 12 хромолит. табл.). 1897 . . . — 25
И. М. Красильщикъ. О борьбѣ съ саранчею при помощи швейнфуртской зелени въ Терской области весною 1900 г. 1901 . . . — 5
А. И. Погибка. О борьбѣ съ кобылками въ Иркутской губ. посредствомъ швейнфуртской зелени въ 1899 г. 1900 . . . — 5
І. А. Порчинскій. О кобылкахъ, повреждавшихъ посѣвы и травы въ губерніяхъ Пермской, Тобольской и Оренбургской, въ 2-хъ частяхъ (съ 81 рис.). 1894 . . . — 30
К. Н. Россиковъ. Перелетная или азіатская саранча. 1899 . . . — 10
Его-же. Примѣненіе парижской зелени для истребленія саранчи (выдержка изъ предыдущей брошюры). 1899 . . . — 5
Н. Н. Соколовъ. Опыты примѣненія швейнфуртской зелени при борьбѣ съ саранчею въ Семипалатинской области. 1901 . . . — 5

И. М. Красильщикъ. Люцерновая или льняная совка и нѣкоторые другіе вредители льна на сѣверномъ Кавказѣ. 1900 . . . — 10
М. Н. Мысловскій. О новомъ паразитѣ майскаго хруща и опытахъ истребленія личинокъ хрущей сѣрнистымъ углеродомъ (съ 1 рис. 1900 . . . — 3
І. А. Порчинскій. Слѣпни и простѣйшій способъ ихъ уничтоженія. 1899 . . . — 5
Его-же. Борьба съ нѣкоторыми вредными бабочками помощью многоядныхъ паразитовъ изъ міра насѣкомыхъ. 1901 . . . — 5
Его-же. Списокъ насѣкомыхъ (и нѣкоторыхъ другихъ низшихъ животныхъ), наиболѣе вредныхъ въ хозяйственномъ отношеніи. 1901 . . . — 2
А. А. Силантьевъ. Свекловичный долгоносикъ и другіе враги сахарной свеклы 1897 . . . — 10
Его-же. Результаты изслѣдованій конопляной (хмѣлевой, льняной) и свекловичной блохи 1897. — 10
Н. Н. Соколовъ. Изслѣдованія, произведенныя надъ образомъ жизни маирскаго клопа или черепашки. 1897 . . . безплатно
Его-же. Жуки, повреждающіе дерево въ складахъ Туркестанскаго края и способы ихъ уничтоженія. 1900. . . . — 5
И. К. Тарнани. Свекловичная нематода (съ 9 рис.) 1897 . . . — 10
Я. Ѳ. Шрейнеръ. Важнѣйшіе враги подсолнечника (съ 19 рис.). 1898 . . . — 5
Его-же. Главныя насѣкомыя, вредящія капустѣ (съ 27 рис.). 1898 . . . — 10
Его-же. Яблонная моль и мѣры борьбы съ нею (съ 5 рис.). 1899 . . . — 5
Его-же. Новый способъ борьбы съ хлѣбнымъ жукомъ (съ 6 рис.). 1900 . . . — 3
Его-же. О мохнатой бронзовкѣ въ южной Россіи. 1900 . . . — 5
Его-же. Слоники, вредящіе плодовымъ садамъ. 1900 . . . — 5
Хлѣбный жукъ и хрущъ-нехрущъ (съ 9 рис.). 1894 . . . — 3
Хлѣбный пилильщикъ (съ 6 рис.). 1894 . . . — 3
Совиноголовка-гамма (съ 5 рис). 1894 . . . — 3
Свекловичный долгоносикъ и полосатый щелкунъ (съ 3 рис.). 1894 . . . — 3
Совиноголовка озимая и восклицательная (съ 3 рис.). 1900 . . . — 2
Просяной или кукурузный мотылекъ (съ 5 рис.) 1900 . . . — 2
Хлѣбный комарникъ или гессенская муха, и шведская муха (съ 15 рис.).1900 . . . — 5
О калифорнскомъ червецѣ (съ 9 рис.). 1899 . . . — 10
Правила для привоза изъ заграницы въ Россію живыхъ растеній, плодовъ и овощей. 1899. безплатно
Относительно условій выписки швейнфуртской зелени. 1900 . . . безплатно

Выписывать эти изданія можно изъ Департамента Земледѣлія или изъ склада А. А. Ф. Девріена (Вас. Остр., Румянц. площадь). 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Марта 1901 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27